նորոգութիւնը արձանագրուած է. «Յամի փրկչին 1862-ին և Յուլիսի 17-ին նորոգուեցաւ եկեղեցին անուամբ սրբոյ Աստուածածնին ձեռնտուութեամբ ազգապետին Գրիգորեան Պետրոս աղին և Խաստուրայ Հայոց ազգին, որք ընթեռնուք, տուք զողորմի, ՌՃԺԱ. Մնացական»։

Եկեղեցւոյ հիւսիսային որմին մեծ մասը դրսից հողին մէջ է, մնացած որմին երեսն խաչքարինք հաստատուած են և երեսն ի հիւսիս դարձած, որոց մէկուն վերայ դառն մի փորագրուած, անընթեռնելի քանի տողեր կը տեսնուին և այս տեղ։

Եկեղեցւոյս հիւսիսային շրջապատը տարածուած է գիւղիս գերեզմանատունը, որ բաղկացած է 5000-ի չափ տապանաքարերով, որ Բագրեւանդայ գերեզմաննոցներու մէջ առաջին տեղն կը բռնէ։ Կը տեսնուին խոյաձև տապանաքարեր, թամքուած, անթամքել ձիեր, գոմէշներ ևն։

Գերեզմանի մի վերայ արձանացած է մի հսկայ խոյ, կռնակին վերայ անընթեռնելի յիշատակարան մի, աջ կողմին վերայ փորագրուած է ձուկ մի, կոնք և շռնիտ, նաև մի չութակ. իսկ ձախ կողին վերայ դառն մի, որոյ վզին զանգակ։

Այս խոյին վերայ գրուած է եղեր իւր տիրոջ հարստութիւն, իւրաքանչիւր օր նա պիտի մորթեր 10 ոչխար, 5 դառ, նաև կարաս մի գինի պիտի խմէր ու խմացնէր իւր տուն պատահած հիւրերուն։

Խոյի մօտ կը տեսնուի մի թամքուած ձիու արձան իւր ամեն կազմածներով, թամքի վերան թուր և կապարճ մի։ Այս տապանաքարը ինքնին ցոյց կուտայ մեծ հնութիւն, քարի մեծ մասը հողի մէջ է. կերևի որ սորա արձանագրութիւնը հողին մէջ մնացած է։